«Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ» ծրագրի շրջանակներում «Գորիսի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող միջոցառումների վերաբերյալ

(հունվար-հունիս 2026թ.)

## 1. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի (ԿԱՊԿ, ԿԶԱՊԿ) գնահատում

**2026** թվականի հաշվետու ժամանակահատվածի համար Գորիսի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից՝ ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների և ծնողի կողմից ներկայացված դիմում-հայտերի, իրականացվել է թվով **54** կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի **(ԿԱՊԿ, ԿԶԱՊԿ)** գնահատում՝ **18** սան, **35** աշակերտ և **1** ուսանող:

Գնահատման արդյունքում **54** երեխայի մոտ արձանագրվել են հետևյալ խնդիրները՝

- Ինտելեկտի (մտավոր) – 17 երեխա
- Խոսքի և լեզվի - 9 երեխա
- Հաղորդակցման - 2 երեխա
- Հուզական - 2 երեխա
- Վարքի - 1 երեխա
- Բազմակի - 16 երեխա
- Շարժունակություն - 1 երեխա

Վերագնահատման արդյունքում **6** սովորողի մոտ կրթական կարիք չի արձանագրվել: Կենտրոն-դպրոց համագործակցության արդյունքում հայտնաբերվել է կրթությունից դուրս 1 երեխա:Գորիսի ՏՄԱԿ-ի մասնագետների կողմից իրականացվում է ԿԱՊԿ գնահատման գործընթաց ՝ հաջորդ ուսումնական տարում սովորողի կրթական իրավունքի իրացման նպատակով:

## 2. Մանկավարժահոգեբանական ծառայությունների մատուցում

Գորիսի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնին ամրագրված են **30** դպրոց ,**19** ՆՈՒՀ,**1** քոլեջ, որից **21** դպրոցում, **13** ՆՈՒՀ-ում և 1 քոլեջում ընդգրկված են կրթության առանձնահատուկ պայմանների և կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ:

Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրվել են **21** դպրոցում, **13** ՆՈՒՀ-ում և 1 քոլեջում: **189** երեխայի համար համատեղ կազմվել են Անհատական Ուսուցման և Անհատական Ուսուցման և Զարգացման Պլաններ:

2026 թվականի կիսամյակում Գորիսի տարածաշրջանի դպրոցներում ընդգրկված են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող **136** աշակերտ, որոնց տրամադրվել են մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ: Կենտրոնի կողմից մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ են տրամադրվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող **126** աշակերտի, **10** աշակերտի աջակցության ծառայությունները տրամադրվել են միայն դպրոցի կողմից: Կրթությունից դուրս 2 դպրոցահասակ երեխա (7 տարեկան և 15 տարեկան) մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ են ստանում Կենտրոնում ՝ ծնողի դիմումի համաձայն: Գորիսի համայնքապետարանի Խնամակալության և հոգաբարձության մարմնի հետ համատեղ տարվում են համապատասխան աշխատանքներ երեխաներին ուսումնական հաստատություններ ընդգրկելու նպատակով:

Գորիսի բազմագործառույթային պետական քոլեջում **6** ուսանող ստանում են մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ:

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում ընդգրկված կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող **47** երեխայի աջակցության ծառայությունները տրամադրվում են Կենտրոնի մասնագետների կողմից :

Մասնագիտական ծառայությունները կազմակերպվում են դասաժամերին կամ դասերից առաջ կամ հետո անհատական կամ խմբային պարապմունքների տեսքով:Այս ձևաչափը հնարավորություն է տալիս տարբեր կրթական միջավայրերում սովորողի կրթությունը կազմակերպել արդյունավետ և համակարգված՝ գնահատելով երեխայի ակտիվ մասնակցության մակարդակը,նրա ներգրավված լինելու աստիճանը,բացահայտելով փոխհարաբերությունները դասընկերների ,ուսուցիչների և մասնագետների հետ:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում և Կենտրոնում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ են տրամադրվել թվով **189** երեխայի՝ ըստ կարիքի հետևյալ աստիճանների.

- Մատուցվող ծառայություններ ստացող երեխաների թվաքանակը՝ ըստ կարիքի <u>առաջին</u> աստիճանի –**65** երեխա
- Մատուցվող ծառայություններ ստացող երեխաների թվաքանակը՝ ըստ կարիքի <u>երկրորդ</u> աստիճանի- **76** երեխա
- Մատուցվող ծառայություններ ստացող երեխաների թվաքանակը՝ ըստ կարիքի <u>երրորդ</u> աստիճանի- **45** երեխա
- Մատուցվող ծառայություններ ստացող երեխաների թվաքանակը՝ ըստ կարիքի <u>չորրորդ</u>

աստիճանի- **3** երեխա

Կենտրոնի մասնագետների կողմից աջակցության ծառայություններ են տրամադրվել նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող, սակայն մասնագիտական աջակցության կարիք ունեցող **2** երեխայի :

**2. Կարողությունների զարգացում/ վերապատրաստումներ**

**50** հանրակրթական ուսումնական հաստատություններում **/19 ՆՈՒՀ, 30 դպրոց, 1 քոլեջ/** իրականացվել են թվով **24** վերապատրաստում , որին մասնակցել են հանրակրթական ուսումնական հաստատությունների **352** անձ՝ վարչական անձնակազմ, մանկավարժ, ուսուցչի օգնական,,մասնագետ,դաստիարակ,դայակ:

Վերապատրաստումներն իրականացվել են ըստ անհրաժեշտության՝ ելնելով Հանրակրթության մասին օրենքում և կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգում կատարված փոփոխությամբ և լրացումներով: Վերապատրաստումների նպատակը հանրակրթական ուսումնական հաստատությունների վարչական և մանկավարժական կազմի հմտությունների ,գիտելիքների և մասնագիտական պատրաստվածության մակարդակի բարձրացումն է :

| ՀՀ | Վերապատրաստման թեմա | Վերապատրաստման մասնակից անձանց թիվ |
|---|---|---|
| 1 | Ավազաթերապիայի և երաժշտաթերապիայի կիրառումը լոգոպեդական աշխատանքում: | 15 |
| 2 | Անհատական ուսուցման և զարգացման պլան | 2 |
| 3 | Կրթության աջակցող միջոցներ. մատչելիություն և խելամիտ հարմարեցումներ | 141 |
| 4 | "Օգնենք օգնողներին" դասընթաց մանկավարժների համար | 38 |
| 5 | Գիտակից ծնողավարությունը որպես երեխայի զարգացման կարևոր գործոն | 78 |
| 6 | Ուսումնական հաստատություններում երեխաների պաշտպանության, հոգեսոցիալական աջակցության և հոգեկան առողջության դեպքերի արձագանքման և ուղղորդման մեխանիզմներ | 55 |
| 7 | Անհատական ուսուցման պլան | 12 |
| 8 | Տեսողության խանգարում ունեցող սովորողների մանկավարժահոգեբանական աջակցության մեխանիզմները | 11 |

## 3. Խորհրդատվություն

**30** դպրոցում, **19** ՆՈՒՀ-ում և **1** ՄԿՈՒ-ում իրականացվել են թվով **143** խորհրդատվություն: Յուրաքանչյուր երեխայի՝ իր կարողությունների սահմանում, դասապրոցեսին ակտիվ մասնակցության խթանման, ուսումնական հարմարեցման նպատակով դպրոցներում և ՆՈՒՀ-ում կազմակերպվել են հանդիպում-քննարկումներ՝ հիմնական խնդիրների վերհանման ու արդյունավետ կրթության կազմակերպման նպատակով: Խորհրդատվություններին ակտիվ մասնակցություն են ցուցաբերել թվով **1087** մասնակից՝ վարչական աշխատողներ, ուսուցիչներ, մանկավարժահոգեբանական թիմի անդամներ, դաստիարակներ, ծնողներ, դասախոսներ: **21** դպրոցում իրականացվել են Անհատական ուսուցման պլանի գնահատման քննարկումներ ,որի արդյունքում ամփոփվել է տվյալ ամիսների ընթացքում սովորողների ունեցած ձեռքբերումները, առաջընթացը և առկա դժվարությունները: Տարվել են համապատասխան աշխատանքներ այդ դժվարությունների հաղթահարման ձևերի և մեթոդաբանության ուղղությամբ:Քննարկումների ընթացքում հստակեցվել է վերագնահատման ենթակա երեխաների թիվը՝ գնահատման գործընթացը առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով:
**13** ՆՈՒՀ-ում ՏՄԱԿ-ի մասնագետները ՆՈՒՀ-ի մանկավարժական կազմի հետ միասին իրականացրել են Անհատական Ուսուցման և Զարգացման Պլանի գնահատում: Գորիսի տարածաշրջանի **1** քոլեջում իրականացվել են մասնագիտական խորհրդատվություններ: Տարածաշրջանի ուսումնական հաստատություններում պարբերաբար իրականացվում են հանդիպումներ և խորհրդատվական այցեր խելամիտ հարմարեցումների ձեռքբերման,արդյունավետ կիրառման,անվտանգ և ապահով կրթական միջավայրի վերաբերյալ:

## 4. Մշտադիտարկում

Գորիսի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից իրականացվել են մշտադիտարկումներ **48** հանրակրթական ուսումնական հաստատությունում՝ **28** դպրոցում , **19** ՆՈՒՀ-ում, **3** այլընտրանքային խմբերում և **1** քոլեջում: Մշտադիտարկումներն իրականացվել են 4 հիմնական ուղղություններով.

- Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մշտադիտարկում
- ԿԱՊԿ//ԿՁԱՊԿ գնահատման գործընթացի մշտադիտարկում
- Ծնող-ուսումնական հաստատություն-ՏՄԱԿ համագործակցությունը
- Ուսումնական գործընթացի ներառականություն

Մշտադիտարկումների արդյունքում ձեռք բերված տեղեկատվությունը հնարավորություն է

ընձեռնել համատեղ  քայլեր ձեռնարկել առկա խնդիրները լուծելու և գործընթացն ավելի համակարգված ու որակյալ իրականացնելու  համար: Մշտադիտարկումների ընթացքում իրականացվել են նաև դասալսումներ,որի արդյունքում արձանագրվել են ուսուցման գործընթացին նպաստող կամ խոչընդոտող միջավայրային գործոնները, դպրոցներում միջանձնային և միջխմբային հարաբերությունների առանձնահատկությունները: Տարբեր խնդիրներով պայմանավորված որոշ ուսումնական հաստատություններում  անհրաժեշտություն է առաջացել կրկնել  մշտադիտարկման այցերը: Խնդիրներն հիմնականում կապված էին  թղթավարության ,ԿԱՊԿ և ԿԶԱՊԿ երեխաների ներգրավվածության, ցածր մակարդակի համագործակցության /ուսուցիչ-ծնող-դպրոց/ հետ: Տարվել են աշխատանքներ խորհրդատվությունների տեսքով՝ ինչպես հաղթահարել խոչընդոտները: Ուսումնական գործընթացի  և միջավայրային հարմարեցման մշտադիտարկման միջոցով վեր է հանվել յուրաքանչյուր հաստատության հիմնական խնդիրները, որոնք հնարավոր կլինի ավելի համակարգված լուծել՝ պայմանավորված ուսումնական հաստատությունների նոր ֆինանսավորմամբ:

## 5. Համագործակցություն

Կենտրոնի մանկավարժները պարբերաբար մասնակցում են սեմինարների, վեբինարների՝ կազմակերպված ինչպես Հանրապետական կենտրոնի, Յունիսեֆի ,Կարմիր Խաչի , այնպես էլ այլ կազմակերպությունների կողմից՝ մասնագիտական հմտություններ ու  կարողություններ ձեռքբերելու նպատակով:Կենտրոնը ակտիվ համագործակցում է տեղական ինքնակառավարման մարմինների, հանրակրթական ուսումնական հաստատությունների, առողջապահական կազմակերպությունների, ընտանիքների,  միջազգային և հասարակական կազմակերպությունների, ՀՀ ոստիկանության,Գորիսի պետական Համալսարանի հետ: Տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության արդյունքում հնարավորություն է ստեղծվել կարճ ժամանակահատվածում ՆՈՒՀ-ում գործընթացն իրականացնել ըստ սահմանված կարգի: Առողջապահական ոլորտի կազմակերպությունների հետ համագործակցությունը հնարավորություն է ընձեռնում հայտնաբերել դեռևս վաղ տարիքում հաշմանդամություն ունեցող երեխաներին, հանդիպել և իրազեկման աշխատանքներ տանել  ընտանիքների հետ ՝ ապագայում երեխայի կրթության կազմակերպման նպատակով:  Մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող հաստատությունների հետ  համագործակցությանը հնարավորություն է ընձեռնել բարձրացնել հաստատությունների վարչական և մանկավարժական կազմի մասնագիտական պատրաստվածությունը:

## 6.Խելամիտ հարմարեցում

Գորիսի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից տարածաշրջանի ուսումնական հաստատություններում իրականացվել են խելամիտ հարմարեցումների վերաբերյալ քննարկումներ վարչական և մանկավարժական համակազմերի մասնակցությամբ: Տարածաշրջանի **19** դպրոց և **13** ՆՈՒՀ ստացել է նպատակային ֆինանսավորում, որի արդյունքում **124** աշակերտի և **37** սանի համար ձեռք է բերվել խելամիտ

հարմարեցումներ: Տարվում են համապատասխան աշխատանքներ ուսումնական հաստատությունների մանկավարժական համակազմի հետ՝ խելամիտ հարմարեցումների նպատակային և արդյունավետ կիրառման նպատակով:

| | |
|---|---|
| Կենտրոնի անվանումը՝ | «Գորիսի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ |

Տնօրեն՝ ______________ (ստորագրություն) Հերմինե Շալունց (անուն, ազգանուն)

Կ.Տ.

«01 » «հուլիս» 2026թ.